

ՎԵՐԱՕԾՎԵՑ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Ապրիլի 17-ին Գուգարաց թեմում, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, կատարվեց Մարգահովիտ գյուղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերաօծման արարողությունը: Զեռամբ Ս̓րբազան Հոր և մասնակցությամբ թեմի ողջ հոգևոր դասի՝ վերաօծվեց եկեղեցու Սուրբ Սեղանը, Խորանը և Մկրտության ավազանը:

Մարգահովիտը Հայաստանի հին ու մեծ գյուղերից մեկն է, որը հիշվում է բրոնզեդարից: Եվ այսօր էլ այն ամենամեծ գյուղերի շարքում է իր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցով, որը կառուցվել է 10-րդ դարում՝ այդ ժամանակ Դսեղից վերաբնակվածների ուժերով, և այնուհետև հիմնովին վերակառուցվել է 1872 թվականին, որի համար որոշ աղբյուրներում այն հիշատակվում է որպես կառուցման թվական: Դսեղցիները կառուցելով նոր եկեղեցին գյուղի նախկին ավերակ Ս. Կարապետ եկեղեցու կողքին, այն անվանել են Ս. Գրիգոր Լուսավորիչ, ինչը հիշողությունն էր Դսեղի Ս. Գրիգոր Բարձրաքաշ վանքի անվան:

Մարգահովտի Ս. Գրիգոր եկեղեցու ներսում, կենտրոնում, տեղադրված են հին եկեղեցու մի քանի խաչաքանդակ քարեր, որոնք ենթադրելի է, որ տեղադրվել են 10-րդ դարում՝ եկեղեցին կառուցելու ժամանակ: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվեց գոմի, պահեստի, հարդանոցի՝ բախտակից դարձնելով նրան համանման մյուս եկեղեցիներին:

19-րդ դարի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դռները երկար տարիներ իբրև աղոթատուն փակ են մնացել հավատացյալ մարգահովիտցիների առջև: Եվ, վերջապես, վերաօծվեց ու սրբագործվեց եկեղեցին, որը վերանորոգվել է ծնունդով մարգահովիտցի, ռուսաստանաբնակ Սերժիկ Կոծինյանի բարերարությամբ, որին ի խորին գնահատանք՝ թեմական առաջնորդը հանձնեց Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Հայրապետի օրհնության գիրը: Վերաօծված եկեղեցուն Վեհափառ Հայրապետը նվիրել էր Ս. Հաղորդության սկիհ, որից մեր Տիրոջ մարմնին ու արյանը կհաղորդվեն եկեղեցու հավատացյալները: Թեմական առաջնորդը նորաօծ եկեղեցուն նվիրեց Սուրբ Սեղանի խաչ:

Հազարավոր մարգահովիտցիներ էին եկել՝ մասնակից դառնալու եկեղեցու վերաօծման արարողությանը: Եկեղեցու վերաօծման առիթով Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանն իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն ուղղեց ներկաներին. «Աղոթքի տուն ենք օրհնում և վերաօծում՝ բացելով այս եկեղեցու դռները, և փառք ենք տալիս Բարձրյալին, որ այս օրն արժանացրեց մեզ այս գյուղի տաճարում աղոթքի կանգնելու համար: Սիրով ու միակամությամբ աչքի լույսի պես պահենք Աստծո տունն ու մեր հայրերի սուրբ հավատը»:

Վերասրբված ու նորաօծ եկեղեցու Սուրբ Սեղանին անդրանիկ Ս. Պատարագ մատուցեց Մարգահովիտ գյուղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նորանշանակ հոգևոր հովիվ Տ. Սողոմոն քհն. Ավետիսյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորներ, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, բազմաթիվ ուխտավորներ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ